

Պ Ե Դ Յ Ա Ջ Ի Ն



Իբր յաղթական զու կը հանգչիս քաղցրունակ,
Մահուան զրոյսիմ ծանրութեան տակ նընշուած.
Օ՛ն անդր, Դիւցազն, խիզախօրէն կանգնէ՛ վեր,
Յառաջացի՛ր, յաղթանակէ՛. պատիւ քեզ:

Երաւի մեղոյշ աչքերով՝
Հրեշտակներու խորիքիկներ,
Պիտի երգեն քեզ քաղցրիկ.
« Կը յօրինենք զրասանգներ
« Մաղիկներէ անթառամ...»



Ողջո՛յն քեզի... Թող ցօղեն վրադ՝ բազմաձիր
Անմահութեան ուղիսինածոր պարգևներ.
Թող լուսինէն դամբանիդ վրայ շող մ'իջնէ,
Եւ ըլլայ քեզ պատշաճ շրջափառ մ'արծաթի:
Ու ջինջ բոյլերն աստղերու
Եթերին վրայ ցիրուցան,
Պիտի երգեն քեզ լրոին.
« Կը պատմենք փառքդ վրսեմ
« Երկիններու տէրերուն...»:



Մանուշակին պէս՝ նըշխարներդ հողին տուած,
Թեթևիկ բոյր մ'արիւնի շուրջդ կ'արձակես.
Զգլիւիչ է ան, կ'արեցընէ իմ հոգիս,
Կը կազդուրէ զքեզ զարգարող ծաղիկներն.
Որոնք անձայն գիշերին,
Ներդաշնակ բիւր համերգով՝
Կը մաղթեն քեզ քաղցրօրէն.
« Խաղաղութիւն քու Հոգւոյդ,
« Անմահութիւն անունիդ...»

ԺԵՆԷՎ

ՀՐԱՅՐ